Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Տավուշի մարզի Նորաշենի Փ.Կ.Ավագյանի անվան միջն.դպրոց

Թեմա՝ Արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման շրջանակներում

Վերապատրաստող, մենթոր՝ Լուսինե Ծերունյան

Ուսուցիչ՝ Վահե Գոզեյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 3

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ 4

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ 4

ԳԼՈՒԽ 1 5

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՂԻՆ 5

ԳԼՈՒԽ 2 10

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 10

ՈՒՀՁ ԴԱՍԱՊԼԱՆ.....16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 29

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 31

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու վարքը, գործունեությունը և կեցությունն ընդհանրապես մեծապես պայմանավորված են նրա նախընտրած արժեքներով, արժեքային կողմնորոշմամբ: Բարու, արդարի, հայրենասիրության և բարոյական այլ արժեքների նկատմամբ մարդու վերաբերմունքով է պայմանավորված անձի, հասարակության, պետության ներդաշնակ կենսագործունեությունը, ինչն առավել էական է դառնում քաղաքական, տնտեսական, մշակութային ազատությունների, գլոբալացման և մարդկանց ազատ տեղաշարժերին ու ազատ ընտրության իրականացմանը նպաստող այլ գործոնների առկայության շնորհիվ: Ասվածը ցույց է տալիս արժեքային համակարգի ձևավորման խնդրի կարևորությունը:

Արժեհամակարգի ձևավորումը սկսվում է երեխայի ծնվելու հետ միաժամանակ և իրականացվում նրա ողջ կյանքի ընթացքում: Այդ գործընթացին մասնակցում են ընտանիքը, միջավայրը, եկեղեցին, տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաները և, իհարկե, երեխաների դաստիարկության հիմնական օղակը՝ հանրակրթական դպրոցը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մարդկանց աշխարհայացքային խորը և մասսայական փոփոխությունները հանգեցնում են հասարակության տնտեսական, քաղաքական և սոցիալական կյանքի փոխակերպման՝ արմատականորեն փոխակերպվում են քաղաքական ու տնտեսական նպատակները, կրոնական նորմերն ու ընտանեկան արժեքները, և այդ փոփոխություններն իրենց հերթին հետադարձ ազդեցություն են ունենում մարդկանց մտածողության, աշխարհընկալման և ընդհանուր հասարակական գիտակցության վրա: 21-րդ դարը առանձնանում է տնտեսական վերելքներով և խորագույն ճգնաժամերով, քաղաքական կուսակցությունների ռազմավարական դիրքորոշումների արմատական փոփոխություններով,ժողովրդավարական ինստիտուտների գործառնության «անիսկական» բնույթով: Ցանկացած փոփոխության հիմքն

ու նպատակը հանդիսանում է անհատ անձն ու մարդկային մակեցությունը:

Այս ամենից անմասն չի մանում նաև կրթությունը՝ ընդհանրապես, և հանրակրթությունը՝ մասնավորապես: 21-րդ դարի կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողակա- նության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ այլ որակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում: Կրթության հիմնախնդիրներով զբաղված մասնագետներին առաջադրված է ճշգրիտ որոշել և բյուրեղացնել այն գլոբալ արժեքները, որոնք անհրաժեշտ

էին քսանմեկերորդ դարի քաղաքացուն: Իսկ որո՞նք են այդ արժեքները, և ի՞նչ մեխանիզմներով են դրանք հասցվելու սովորողին: Այսօրինակ հարցերը քննարկումների նյութ էին դառնում: Արագընթաց փոփոխությունների, նոր արժեքների այդ հորձանուտում երիտասարդ սերունդը դժվարանում էր իր համար արժեքային կողմնորոշումներ ձևավորել:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Սույն հետազոտական աշխատանքի համար մեր առջև նպատակ ենք դրել՝

- Ներկայացնել և ուսումնասիրել արժեքային համակարգի ձևավորման պատմությունը մարդկության զարգացման տարբեր փուլերում: Առաջադրված նպատակին հասնելու համար նպատակահարմար ենք համարել վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականությունը:
- Պարզաբանել արժեքային համակարգի դերը դասաժամերին:
- Լուսաբանել արժեքային համակարգի ձևավորման գործընթացը և յուրացումը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵԸ

- Ուսումնասիրել հանրակրթական դպրոցում Հայոց պատմություն առարկայի դասավանդման ընթացքում աշակերտների մոտ ձևավորված արժեքների բացահայտումը:
- Խթանել արժեքային համակարգի ձեռքբերմանը սովորողների ճանաչողական ակտիվության, մտածողության ինքնուրույնության համատեքստում:
- Զարգացնել սովորողների մոտ մի շարք արժեքների դրսևորումը ուսումնառության ընթացքում:

ԳԼՈՒԽ 1

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Կրթությունը՝ որպես մշակույթի ժառանգություն և անձի սոցիալականացման միջոց, ծագել է հասարակության հետ միասին և զարգացել աշխատանքային գործունեությանը, մտածողությանն ու լեզվի զարգացմանը զուգահեռ: Պատմական էքսկուրսը հետաքրքիր տեղեկություններ է մեզ տալիս (Եգիպտոս, Միջագետք, Հին Հունաստան, Հռոմ, Չինաստան, Հնդկաստան) հազարամյակներ առաջ մարդու ստեղծած խոշոր դպրոցների մասին: Անշուշտ, մարդկային մտքի պատմության մեջ կրթության ոլորտում բեկումնային էր Յան Ամոս Կոմենսկու կողմից առաջադրված դաս–դասարանային համակարգը, ինչը կրթության և ուսուցման արդյունավետությունը մեկ այլ հարթություն բարձրացրեց: Ժամանակակից մտածողության շրջանակներում առկա բազմաթիվ տեսական և գործնական հայեցակարգերի վերլուծության, համադրման և սինթեզի արդյունքում կարող ենք փաստել, որ կրթության արդյունավետությունը պայմանավորված է ուսուցման և դաստիարակության համարժեք, գրագետ, մարդու հոգեկան և ֆիզիկական առողջությանը միտված մեթոդների, սկզբունքների և տեխնոլոգիաների ընտրությամբ: 21–րդ դարի մարդուն արդյունավետ կրթելը պայմանավորված է նրա հոգեբանական կառուցվածքի յուրահատկությունների հետ, ասել է թե՝ սովորողի անձի հոգեկանի առանձնահատկություններով:

2000թ. սկզբում էմպիրիկ հետազոտությունները[1] փաստում էին, որ զարգացած տեղեկատվական և հետարդյունաբերական հասարակությունները փոխում են իրենց սոցիալ-քաղաքական հեռանկարային զարգացման հնարավորությունները երկու կարդինալ ուղիներով.

1. **Արժեքային համակարգեր**. Արդյունաբերական հասարակությունը կենտրոնանացած էր կարգապահության, ինքնահրաժարման և անձնական տնտեսաֆինանսական ձեռքբերումների վրա, հետարդյունաբերական ժամանակահատվածում տեղի տալով ու իրենց համար որոշիչ համարելով ապրելակերպի և կենսակերպի անհատական

ընտրությունն ու անձնական ինքնարտահայտման ավելի մեծ ազատ ընտրությունը, և «մատերիալիստական-նյութական»՝ տնտեսաշահավետության ու ֆիզիկական անվտանգության արժեքների շեշտադրումից անցում էր կատարվում «հետնյութական»՝ անհատի ինքնարտահայտման ու կյանքի որակի արժեքներին:

[1] Տե՛ս Инглхарт Ф. Р., Постмодерн: меняющиеся ценности и изменяющиеся общества, https://sociology.mephi.ru/docs/polit/html/ingl.htm

2. **Ինստիտուցիոնալ կառուցվածք**. Աշխարհը մոտենում է նաև հիերարխիկ բյուրոկրատական կազմակերպությունների դասական զարգացման սահմաններին,

որոնք պատմական որոշակի փուլում նպաստել են ժամանակակից հասարակության ձևավորմանը: Բյուրոկրատական պետությունը, քաղաքական կուսակցությունները,

զանգվածային արտադրության կազմակերպումը, արհմիությունները նշանակալի դեր են խաղացել արդյունաբերական հեղափոխությունն ու ժամանակակից պետությունը կայացնելու գործում: Բայց այսօր նրանք հասել են շրջադարձային կետի՝ իրենց ֆունկցիոնալ արդյունավետության սահմաններին:

Ըստ այդմ՝ գիտահրապարակման խնդրո նյութն ու մտորումների բուն նպատակային խնդիրը արժեքային համակարգում առաջացող փոփոխությունների իսկության բացորոշումն է: Գոյություն ունեն արժեքի բազում տարբեր սահմանումներ: Բոլոր այդ սահմանումների համար, ըստ Է. Դյուրկհեյմի, Մ. Վեբերի, Տ. Պարսոնսի, Վ. Թոմասի, Ֆ. Զնանեցկու և այլոց, ընդհանուր է այն, որ արժեքների սոցիոլոգիական, փիլիսոփայական, հոգեբանական և այլ հայեցակարգերը կրում են որոշակի բարոյական բովանդակություն միահյուսված լինելով կրոնական գաղափարներին:

Ըստ Ռ. Քոչարյանի՝ արժեքը աստվածային արարչությունում ու նախախնամությունում և մարդկային գործունեությունում ու ստեղծագործությունում կերպացյալ ու ներբովանդակյալ հոգևոր խորհուրդ է՝ հոգեկեցույց ու կենարար, սքանչելի և-կամ պիտանի ու օգտակար մարդկային ինքնությանը, կյանքին ու մշակույթին[2]: Ըստ իր մեկ այլ սահմանման՝ արժեքը ամենայնում կերպացյալ ու ներբովանդակյալ աստվածայինն է, հոգևոր խորհուրդ՝ մարդկային ինքնությանն ու կյանքին հոգևոր հաճույք պատճառող, ներկատարելագործող առ իմաստություն, ամենայն առաքինություն ու բարեկարգություն: Արդարև, արժեքի հետ ներմիասնացող մարդկային ներքին ու արտաքին կյանքն առաջացնում է գոհության հոգևոր ապրում, որ և տարատեսակ արժեքների ու կյանքի պարագաներում կարող է լինել հոգևոր հաճույք, ուրախություն ու հրճվանք, կամ հաղթանակի ցնծություն, կամ անձի, համաշխարհի և Աստծո հետ ներմիասնություն հայտող բերկրանք ու սքանչացում:

Արժեքների և արժեքային կողմնորոշումների հարցի բարդությունը ցույց տալու համար Մ. Պիյասան[3] վերցրել է գրականության մեջ հայտնի արժեքային

---

[2] Քոչարյան Ռ., Պատմությունը և Հերմենևտիկան, Գիրք 1. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, «Փրինթինֆո», Եր., 2016, էջ 335:
[3] Տե՛ս Piyasa M., Human values: nature, meaning and types. https://www.yourarticlelibrary.com/essay/values/human-values-meaning-nature-and-types/86964

հատկանիշները և յուրաքանչյուրին ավելացրել հակառակ հատկանիշը՝ ստանալով ոչ պակաս համոզիչ արդյունք:

Արժեքները չեն արտահայտում զգացմունքները, այլ անբաժանելի են դրանցից: Արժեքները կան մտքում, բայց ձևավորվում են սոցիալական հարաբերություններով: Մարդկային արժեքները բացարձակ են, բայց դրանք պետք է կյանքի կոչվեն կոնկրետ պատմական իրավիճակում: Արժեքները պատկանում են մտքի ոլորտին, բայց դրսևորվում են մարդու վարքագծում: Արժեքները պատկանում են բոլոր մշակույթներին և քաղաքակրթություններին, սակայն պակաս նշանակալից չեն ազգերի և ժողովուրդների ավանդական արժեքները: Արժեքներն այն են, ինչը ներքուստ պատկանում է մարդկանց, բայց դրանցից շատերը

պարտադրված են հասարակության կողմից: Արժեքները պաշտամունքի առարկաներ են, չնայած մարդկության կեսը պատրաստ չէ երկրպագել նույնիսկ Ամենակարողին: Արժեքները մարդկային ոգու արդյունք են, բայց գործում են ինտելեկտի առաջնորդությամբ: Արժեքները դիտարկվում են որպես հավերժ, բայց բովանդակային փոփոխություն են կրում մի դարաշրջանից մյուսը: Արժեքները գործում են որպես հանրային բարիքի ստեղծման և զարգացման նշանակալի դրդիչ, և, ընդհակառակը, դրանք մշակվում են այդ բարիքների անհրաժեշտությամբ:

Ամփոփելով անցյալ դարի երկրորդ կեսի հայտնի հետազոտողների մոտեցումները՝ Շալոմ Շվարցը 2006թ. առաջարկեց մարդկային 10 հիմնական արժեքների հայեցակարգը, ձևակերպելով արժեքային հասկացությունների հետևյալ ընդհանուր առանձնահատկությունները.

- Արժեքները համոզմունքներ են, որոնք սերտորեն կապված են անհատի հույզերի հետ:
- Արժեքները մոտիվացիոն կառուցվածքներ են, որոնք որոշում են մարդկանց ձգտումները և նպատակները:
- Արժեքները, ի տարբերություն նորմերի ու մտադրությունների, վերացական են՝ կապված վերացական նպատակների հետ:
- Արժեքները ծառայում են որպես գործողությունների, մարդկանց և իրադարձությունների ընտրության և գնահատման չափանիշներ և չափորոշիչներ:
- Արժեքները հիերարխիկ են, և դրանց առաջնայնությունն ու հերթականությունը՝ դասավորված տվյալ անձի կողմից[4]:

Այնուհետև հետազոտողների ուշադրությանն են ներկայացվում մեկ տասնյակ հիմնական արժեքներ, որոնք, ըստ Շվարցի, ներառում են «բոլոր հիմնական

[4] Shalom H. Schwartz. Basic Human Values: An Overview, p. 2, https://scholarworks.gvsu.edu/cgi/viewcontent.cgi?article=1116&context=orpc

արժեքները, որ և ճանաչված են աշխարհի բոլոր մշակույթներում»: Շվարցն առանձնացնում է հիմնական արժեքների առաջին տասնյակը.

1. Ինքնակառավարում, 2. Խրախուսանք, 3. Հեդոնիզմ, 4. Հաջողություն, 5. Ուժ, 6.Անվտանգություն, 7. Համապատասխանություն, 8. Ավանդույթ, 9. Բարի կամք, 10. Ունիվերսալիզմ:

Արժեքներն ու արժեհամակարգը կարող են և՛ նպաստել հասարակության զարգացմանն ու բարեկարգմանը, և՛ դառնալ կործանման տանող գործոններ, որի վառ ապացույց է արժեքային մոտեցման համատեքստում Խորհրդային հասարակության փլուզման վերլուծությունը, ըստ այդմ՝ ի համեմատ հայտարարված և հավաքական կամքով ընդունված հիմնարար իդեալների (արժեքների)՝ քաղաքական առաջնորդների խոսքի ու գործի (իրականացման) ակնհայտ անհամապատասխանությունը:

«Համընդհանուր արժեքներ» հասկացությունը սկսեց լայնորեն կիրառվել քսաներորդ դարում՝ գլոբալիզացիայի ծավալմամբ: Այս համապարփակ երևույթը պահանջում էր որոշակի ընդհանուր արժեհամակարգի մշակում, քանի որ մարդկության բազմամշակութայնաց

ման իրողության ու գործընթացի ճանաչումով, որպես անհրաժեշտություն ձևակերպվեց այս հայեցակարգը՝ միջքաղաքակրթական երկխոսություններ հաստատելու համար: Միևնույն ժամանակ, բազմամշակութայնացման գործընթացն այսօր բավական հակասական է և

քննադատվում է եվրոպական երկրներում ծագած այժմյան խնդիրների հետ կապված. փախստականներ և ներքին տեղահանվածներ Մերձավոր Արևելքից և Հյուսիսային Աֆրիկայից, Ուկրաինա-Ռուսաստան հակամարտությունն ու հակառուսական մենտալիտետի տարածումը և այլն:

Մարդկությունը վերստին թևակոխել է ցնցումների, միջազգային լարվածության, պատերազմների շրջան և, կարծես, ավարտվել է խաղաղության, քաղաքացիական գիտակցության ու համընդհանուր կրթության մակարդակի աճի, բարքերի մեղմացման և այլախոհության նկատմամբ հանդուրժողականության, մշակութային զարգացման ժամանակահատվածը: Անհավատությունը, հոգևոր հիասթափությունը, նիհիլիզմը, բոլորի համար այնպիսի կարևոր հարցերի, զորօրինակ՝ «ո՞ւր ենք մենք գնում» հարցի հստակ պատասխանների բացակայությունը, այսօր մարդկությանը կանգնեցրել է անորոշության իրավիճակում: Այնինչ, խնդրի քննախոհական մոտեցումը կարողունա՛կ է բացահայտել համամարդկային արժեքների ընկալում՝ որպես բոլորի կողմից ճանաչված, մնայուն, էական նշանակություններ՝ անկախ սեռից, ռասայից, քաղաքացիությունից, մարդկանց սոցիալական կարգավիճակից: Համամարդկային արժեքները մեծ նշանակություն ունեն մարդկության համար՝ որպես բոլոր մարդկանց միասնությունը, համակեցությունը և հանրակեցությունը ապահովող հիմնաբաղադրիչ, ինչպես նաև ցանկացած պետության համար, քանի որ

վերջինս բավարարում է կամ պե՛տք է բավարարի հասարակության և քաղաքացու կարիքները, շահերն ու իրավունքները: Ժամանակակից սոցիոլոգիական

մեկնաբանության մեջ նշանակալի է դիտվում Ռ. Ինգլհարթի հայեցակարգը, որը մասամբ հիմնված է Ա. Մասլոուի կարիքների տեսության վրա: Ռ. Ինգլհարթը տարորոշում է նյութապաշտական և հետնյութական արժեքները: Առաջին խումբը ներառում է բարեկեցության և ֆիզիկական անվտանգության արժեքները, իսկ երկրորդը՝ որևէ խմբին պատկանելը, կյանքի որակն

ու անձի ինքնադրսևորումը: Եվ ելնելով որոշակի արժեքների գերակայությունից՝ կարելի է դատել հասարակության զարգացման փուլի որակի ու մակարդակի մասին: Արժեքները հանդես են գալիս որպես ուղեցույց, որն օգնում է նկատել, թե ինչն է ամենակարևորը մարդու

կյանքի համար (դրական կամ բացասական իմաստով), որին հավատարիմ մնալով մարդը պահպանում է իր Ես-ը, իր վարքի ներքին հետևողականությունը: Պետք է նկատի ունենալ, որ Ինգլհարթի աշխատանքն ունի էմպիրիկ բաղադրիչ՝ էմպիրիկ տվյալներ ավելի քան չորս

տասնյակ հասարակությունների համար 1970-1995 թթ.[5]: Հայտնի է, որ արժեքները մի կողմից՝ ձևավորվում են բնության և հասարակության ազդեցությունից, իսկ մյուս կողմից՝ ստեղծվում են մարդու ներաշխարհով ու ազդեցությամբ: Արտաքին բնաշխարհի կամ անձի ներաշխարհի որևէ մասի որպես արժեք հանդես գալը հնարավոր է նկարագրել զարգացման հետևյալ ընթացակարգով՝ իրականության օբյեկտ - նշանակություն - նշանակության գիտակցում - գաղափարի / իդեալի ձևավորում - գաղափարի / իդեալի կերպարանում –իդեալի իրականացում: Արժեքները ոչ միայն առկա են թղթի վրա, լրատվամիջոցներում, սոցիալական ցանցերում, այլև ամենքի ու յուրաքանչյուրի վարքագծում՝ վերաբերմունքում, փոխհարաբերությունում, գործողությունում:

«Մարդու ինքնությունն ու կյանքը սոսկ ազդեցություններ չեն, այլ՝ առավելապես իր ընտրությունը: Մտքի այս բանաձևը կարելի է նաև ամրագրել բացորոշ ներկայացնելով ազդեցության բոլոր հնարավոր գործոնները: Մարդու ինքնությունն ու կյանքը սոսկ ազդեցութ յունները չեն՝ արտաքին իրաց, գործոց և կամ այլ անձանց, այլ՝ առավելապես իր կատարած ընտրությունը»[6]: Եվ արժեքները, արժեքային կողմնորոշումները, արժեհամակարգը կարող են ներկայացնել հենց այն ուժը, որը կոչված է համախմբելու և կողմնորոշելու մարդուն, խմբերին և ողջ

---

[5] Մանրամասն տե՛ս Inglehart R., Modernization and Postmodernization. Cultural, Economic and Political Change in 43 Societies. Princeton, Princeton Univ. Press, 1997:

[6] Քոչարյան Ռ., Պատմությունը և Հերմենևտիկան, Գիրք 1. Մովսես Խորենացու պատ մագիտական հայեցակարգը, «Փրինթինֆո», Եր., 2016, էջ 334:

հասարակությանը՝ «նյութականից» դեպի «հոգևոր», արտաքին բարեկեցությունից՝ բարեկարգության:

ԳԼՈՒԽ 2

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ մանկակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական

անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը

աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի

(ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, Խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվա- պան միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնա- հատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամայն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը,կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «...Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»[7]:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների[8]: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն:

---

[7] Սուխոմլինսկի Վ.Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977, էջ 22:

[8] Փարեմուզյան Ի., Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, պրակ 1, Երևան, 2017, էջ 397:

Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի

նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»[9]:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Առհասարակ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնա- կան գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող օտար լեզուները, մասնավորապես՝ նկատի ունենք ռուսաց լեզուն, որով ստեղծված համաշխարհային նշանակության գրական

[9] Սուխոմլինսկի Վ.Ա., նույն տեղում, էջ 64:

կոթողներն ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ: Ահա թե ինչու հանրակրթական դպրոցում ռուսաց լեզվի և գրականության դասավանդումը դուրս է գալիս սոսկ օտար լեզու և օտար մշակույթ ուսուցանելու նեղ շրջանակից և վերածվում է սովորողների

գեղագիտական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի, որի դերը չպետք է թերագնահատել:

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական

ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտա- կան ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկություն»[10]:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր

[10] Փարեմուզյան Ի., Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում, նույն տեղում, էջ 399:

կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:

Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություն[11]:

21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը:

Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները: Հայոց պատմության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալու իրականացնելու մեր իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը: Հայոց պատմությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել Հայաստանի անկախ պետությանը, պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին: Հենց այս պատճառով է, որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

[11] Նույն տեղում:

ՈՒՀՁ դասապլան

ՊՈԱԿ դպրոց	Ամսաթիվ	Առարկա
Նորաշենի միջն. դպրոց	**04.12.2023 թ**	Հայոց պատմություն
Ուսուցիչ	**Դասարան (աշակերտներ)**	**Թեմա (էջ)**
Վահե Գոզեյան	7-րդ, 16 աշակերտ	«Ավարայրի ճակատամարտը», էջ 77
	• ***Ժամատախտակ***	

❖ **Պլանավորման ուղղորդումներ**

դրաժեշտ է՝

- *բացատրել դասի կարևոր դրույթներն ու սահմանումները*
- *նոր նյութի միջոցով խթանել բարձր կարգի մտածողություն*
- *ընկալման ստուգման հարցերն ուղղել գիտելիք հասկացման ստուգմանն ու վերլուծական մտածողությանը*
- *աշակերտներին պատրաստել գործնական աշխատանքին*

❖ **ՈՒՀՁ (UDL) ուղենիշներ**

ահովել այլընտրանքներ լսողական եւ ողական տեղեկատվության համար։

ոգեցնել բառապաշարն ու սիմվոլները, *ահայությունն ու լեզվական ույցները։*

ոգեցնել մաթեմատիկական ահայտությունները, բանաձևերը։

ցադրել տեղեկությունը բազմազան ոցներով։շ

տիվացնել արդեն առկա գիտելիքը կամ ահովել անհարաժեշտ եկատվություն՝ նոր նյութ մատուցելուց աջ։

- Ուսուցիչը սահիկաշարով ներկայացնում է Ավարայրի ճակատամարտը՝ գրատախտակին առանձնացնելով կարևոր թվականները, հասկացություններն ու անունները «key 3» սանդղակով , որոնք զուգահեռաբար նշելու են իրենց մոտ աշակերտները նույն սանդղակով *(նույն սանդղակը գրատախտակի վրա նախապես գծում է ուսուցիչը, աշակերտները սանդղակի ձևին ծանոթ են)*։
- Քարտեզի վրա ցույց է տալիս երկու զորքերի տեղավորումը և ճակատամարտի ընթացքը։ Պարբերաբար կատարում է ընկալման ստուգում *(հարցերը ներքևում են)*։
- Իրար կողք նստած զույգերը T-աձև աղյուսակի միջոցով ներկայացնում են պատերազմի ընթացքի պատճառներն ու հետևանքները գրավոր և բանավոր՝ քննարկելով նոր նյութը *(Աղյուսակը նախապես զույգերի քանակով տպված բաժանվում է)* Տրվում է հինգ րոպե :
- Ավարտելուց հետո կամավոր սկզբունքով երկու զույգ ներկայացնում է իր կատարած վերլուծությունը։ Զուգահեռ ուսուցիչը հավելումներ է անում կամ նշում է, որ եթե կան այլ մեկնաբանություններ, այլ կետեր ևս, ապա համապատասխան խմբերը ևս խոսք ասեն։ (*Ամբողջ ընթացքում ուսուցիչն օգտագործում է նաև բութ մատի ընթացակարգը, որով աշակերտներին պահում է ներգրավված ներկայացնող խմբի աշխատանքում, ինչպես նաև ստուգում է, թե որքանով են համամիտ այս կամ այն տեսակետի հետ)։*

Կարևոր հղումներ	• *Դասագիրք* • *Թեմատիկ պլան*

Դասի վերջնարդյունքներ

Ի՞նչ կկարողանան անել աշակերտները դասի ավարտին: Օգտվել Բլում-Անդերսոնի աստիճանակարգից ՍՄԱՐԹ վերջնարդյունքներ սահմանելու համար:

- **ներկայացնել** Ավարայրի ճակատամարտը
- **քննարկել** ճակատամարտի պատճառները և հետևանքները
- **առաջարկել** ճակատամարտի սեփական ռազմավարությունները

Առաջնորդական կարողունակություններ

Հիմնվելով առաջնորդության հայեցակարգի կարողունակությունների վրա՝ ո՞ր հմտություններն եք ուզում զարգացնել ձեր և ձեր աշակերտների համար: Մեկ դասի շրջանակներում ցանկալի է սահմանել 1-2 հմտությունն՝ իրատեսականությունը պահպանելու նպատակով:

Ուսուցչի կարողունակություններ	Աշակերտի կարողունակություններ
Նշեք թե ինչ քայլերով եք զարգացնելու նշված հմտությունը դասի ընթացքում:	*Նշեք թե ինչ քայլերով եք զարգացնելու նշված հմտությունը դասի ընթացքում:*
• **Պարզ հաղորդակցվել** *(ընտրվել են նյութի ներկայացման/ընկալման տարբեր մեթոդներ՝ աղյուսակներ, սահիկաշար, հարցադրումներ…հաղորդակցումը պարզ դարձնելու համար ևս)*	• **Պատասխանատվության բաշխում** *(գործնական աշխատանքի փուլում կատարելու են դերաբաշխում, ներկայացման հատվածների բաժանում)* • **Կատարել պլանավորում** *(գործնական աշխատանքի փուլում աշակերտները*

	պլանավորելու են նոր ռազմավարություն՝ այն նկարելով)

Անհրաժեշտ պարագաներ *Ի՞նչ է դիդակտիկ պարագաներ և նյութեր են անհրաժեշտ դասի ամեն փուլի համար։*	**Բանալի հասկացությունները** Ի՞նչ կարևոր հասկացություններ, անվանումներ և սահմանումներ են սովորելու աշակերտները։	**Գնատահում** Ինչպե՞ս եք չափելու աշակերտների առաջընթացն ու դասի վերջնարդյունքները։
• Համակարգիչ • պրոեկտոր • տեսասահիկ • արկղ • խճանկար • գրատախտակ • քարտեզ • կավիճ • մարկերներ • A4 ֆորմատի թղթեր • տետր • գրիչ • ֆլիպ չարթ • ելքի քարտ(սթիքեր) • համացանց • տպված առաջադրանքներ • ստուգաթերթ	• Ավարայրի ճակատամարտ • Քրիստոնեական առաջին պատերազմ • Հայոց պատերազմ կամ Վարդանանք • Վարդան Մամիկոնյան • Ղևոնդյաց քահանաներ • Տղմուտ գետ	• Հարց ադրումներ • Ինքնուրույն աշխատանք • Գործնական աշխատանք • Ելքի քարտեր • Ստուգաթերթ

Դասի սկիզբ (7 րոպե)

Այս հատվածում պետք է բացատրել «ինչո՞ւ» կարևոր դրույթը և կապել այն մեծ նպատակի հետ: Գրել ինչպես, ինչ մեթոդով, եղանակով է իրականացվելու դասի սկիզբը, ինչ հրահանգներ և հարցեր են տրվելու: Նշել ուսուցչի և աշակերտների գործողությունները:

Պլանավորման ուղղորդումներ

❖ **Անհրաժեշտ է ներկայացնել**

- *վարքային և այլ սպասելիքները*
- *դասի թեման և նպատակը*
- *դասի կարևոր դրույթներն ու բառապաշարը*
- *կապը նախորդ գիտելիքի հետ*
- *խթանիչ վարժություն (եթե կա)*

❖ **ՈՒՀՁ (UDL) ուղենիշներ**

-Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար:

Ակտիվացնել արդեն առկա գիտելիքը կամ ապահովել անհրաժեշտ տեղեկատվություն՝ նոր նյութ մատուցելուց առաջ:

- Դասարանը նախապես բաժանված է երկու կենտրոնների՝ «Հայեր» և «Պարսիկներ» *(Խմբերի անունները զուգահեռ ունեն համարակալումներ՝ 1 և 2, սակայն թիմերի անունները չեն երևում, կենտրոնների սեղաններին դրված են խմբերի թվերը, թիմերի անունները և դասի սկզբի համար անհրաժեշտ առաջադրանքը)*:

- Աշակերտները մի շարքով կանգնում են դռան մոտ:Ուսուցիչը հերթով ողջունում և հրահանգում է արկղից քաշել մեկական թուղթ, որոնց վրա գրված են 1 կամ 2 թվանշանները:Աշակերտները քաշում են իրենց թիվը և նստում համապատասխան սեղանի մոտ՝ սպասելով ուսուցչի հրահանգին:

- Սեղանին կա «Արա' հիմա» առաջադրանքը: Յուրաքանչյուր երկու աշակերտի առջև դրված է Գրիգոր Խանջյանի «Վարդանանք» նկարը՝ բաժանված 6 մասի:Աշակերտները պետք է հավաքեն խճանկարն ու երկու նախադասությամբ գրեն կամ բանավոր պատասխանեն՝ ինչի մասին է այն *(թե՛ գրելու, թե՛ բանավոր պատասխանելու միջոցով պատասխան կարող է հնչեցնել նաև այն աշակերտը, ով խոսելու/գրելու դժվարություն ունի)*:

- Աշխատանքը կատարելու ընթացքում հնչում է «Քաջ Վարդան» երգը՝:

- Աշխատանքն իրականացնելուց հետո իրականացվելու է ստուգման փուլը հետևյալ հարցերով՝

1. Ո՞ր նկարի խճանկարն եք հավաքել:
2. Ի՞նչ նկար է սա:
3. Ի՞նչ եք տեսնում այս նկարում:
4. Ի՞նչ պատերազմ եք տեսնում նկարում:
5. Ի՞նչ ծանոթ հերոսներ տեսաք նկարում:
6. Ըստ Ձեզ ինչի՞ մասին է լինելու մեր դասը:

- Ուսուցիչը նշում է դասի վերջնարդյունքները և հմտությունները *(դասի վերջնարդյունքը նշված է նաև սահիկաշարում, որի միջոցով մատուցվելու է նոր նյութը)*:

- Ուղղորդել տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործունեությունը: *-Ապահովել հնարավորություններ անհատական ընտրություն կատարելու և ինքնուրույնության համար:* *Ուսումնառությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը* *-Ընդգծել և տեսանելի դարձնել վերջնարդյունքների կարևորությունը:* *-Զարգացնել դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու անձնային որակներն ու ռազմավարությունները:*	

Նոր նյութի ներկայացում (15 րոպե)

Անհրաժեշտ է ներկայացնել դասի «ինչ»-ն ու «ինչպես»-ը: Բացատրել նոր նյութը, տրամադրել հրահանգներ, բերել օրինակներ և կատարել ընկալման ստուգում:

❖ **Պլանավորման**	• Ուսուցիչը սահիկաշարով ներկայացնում է Ավարայրի ճակատամարտը՝ գրատախտակին առանձնացնելով կարևոր թվականները, հասկացություններն ու անունները «key 3» սանդղակով , որոնք զուգահեռաբար նշելու են իրենց մոտ աշակերտները նույն սանդղակով *(նույն սանդղակը գրատախտակի վրա նախապես գծում է ուսուցիչը, աշակերտները սանդղակի ձևին ծանոթ են):*

ուղղորդումներ **Անհրաժեշտ է՝** ● *բացատրել դասի կարևոր դրույթներն ու սահմանումները* ● *նոր նյութի միջոցով խթանել բարձր կարգի մտածողությունը* ● *ընկալման ստուգման հարցերն ուղղել գիտելիք հասկացման ստուգմանն ու վերլուծական մտածողությանը* ● *աշակերտներին պատրաստել գործնական աշխատանքին* ❖ **ՈՒՀՁ (UDL) ուղենիշներ** *-Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար։* *-**Պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները,** շարահյուսությունն*	● Քարտեզի վրա ցույց է տալիս երկու զորքերի տեղավորումը և ճակատամարտի ընթացքը։ Պարբերաբար կատարում է ընկալման ստուգում *(հարցերը ներքևում են)*։ ● Իրար կողք նստած զույգերը T-աձև աղյուսակի միջոցով ներկայացնում են պատերազմի ընթացքի պատճառներն ու հետևանքները գրավոր և բանավոր՝ քննարկելով նոր նյութը *(Աղյուսակը նախապես զույգերի քանակով տպված բաժանվում է)* Տրվում է հինգ րոպե : ● Ավարտելուց հետո կամավոր սկզբունքով երկու զույգ ներկայացնում է իր կատարած վերլուծությունը։ Ուսուցիչը հավելումներ է անում կամ նշում է, որ եթե կան այլ մեկնաբանություններ, այլ կետեր ևս, ապա համապատասխան խմբերը ևս խոսք ասեն։ (*Ամբողջ ընթացքում ուսուցիչն օգտագործում է նաև բութ մատի ընթացակարգը, որով աշակերտներին պահում է ներգրավված ներկայացնող խմբի աշխատանքում, ինչպես նաև ստուգում է, թե որքանով են համամիտ այս կամ այն տեսակետի հետ)։*

ու լեզվական կառույցները։ *-Պարզեցնել մաթեմատիկական արտահայտությունները, բանաձևերը։* *-Յուցադրել տեղեկությունը բազմազան միջոցներով։* *Ակտիվացնել արդեն առկա գիտելիքը կամ ապահովել անհարաժեշտ տեղեկատվություն՝ նոր նյութ մատուցելուց առաջ։* *-Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը։* *-Ուղղորդել տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործունեությունը։* *-Կիրառել հաղորդակցության տարբեր միջոցներ։* *-Աջակցել պլանավորման ու ռազմավարությունների զարգացման գործընթացին։* *-Զարգացնել առաջընթացի մշտադիտարկման կարողությունը։*	

Ուսումնառությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը:	
❖ **Ընկալման ստուգում** *Գրել ընկալման ստուգման հարցերը, որոնք պլանավորում եք ներկայացնել գործնական աշխատանքից առաջ, նոր նյութի ընկալումը ստուգելու և քննական մտածողությունը խթանելու համար:*	1. ***Ո՞վ 449 թվականին առաջ քաշվեց կրոնափոխության պահանջը:*** 2. ***Ովքե՞ր պիտի կրոնափոխ լինեին:*** 3. ***Ե՞րբ տեղի ունեցավ Ավարայրի կռիվը:*** 4. ***Ո՞րտեղ տեղի ունեցավ Վարդանանց պատերազմը:*** 5. ***Քանի՞ զոհ ունեցավ հայկական կողմը:*** 6. ***Հայերը կրոնափոխ եղա՞ն, ինչո՞ւ:***

Գործնական աշխատանք (15 րոպե)

Անհրաժեշտ է նոր գիտելիքն ու հմտությունը կիրառելու հնարավորություն ստեղծել՝ կապելով այն դասի վերջնադյունքների և նոր նյութի հետ: Գրել՝ ինչպես, ինչ մեթոդով/ եղանակով է իրականացվելու գործնական աշխատանքը, ինչ հրահանգ/հրահանգներ են տրվելու: Նշել ուսուցչի եւ աշակերտների գործողությունները, վարքային ակնկալիքները:

❖ **Պլանավորման ուղղորդումներ** **Անհրաժեշտ է՝** • *ապահովել համագործակցություն*	• Ուսուցիչը հրահանգում է աշակերտներին բացել իրենց սեղաններին նախապես դրված թվանշանների տակ գտնվող թիմերի անունները՝ ***«Հայեր»*** և ***«Պարսիկներ»***: • Թիմերին բանավոր և սահիկաշարի միջոցով ներկայացնում է գործնական աշխատանքի կանոնները և ժամանակը, հանձնում է նախապես պատրաստված դիդակտիկ նյութերը *(մարկերներ, A4 թղթեր)*՝ հրահանգելով ***ներկայացնել***՝ 1. ***Ինչու՞ տեղի ունեցավ Ավարայրի պատերազմը:*** 2. ***Ի՞նչ ռազմավարություն կառաջարկեիք, եթե նրանց տեղում լինեիք:*** *(ռազմավարությունը պետք է ներկայացնել ամեն խմբի տեսանկյունից՝ պարսկների և հայերի)* ***Պատասխանները նկարելով, գրելով սցենար/շարադրություն…, դերախաղի միջոցով՝ ըստ ցանկության:***

- *դիտարկել աշխատանքը*
- *տրամադրել անհրաժեշտ աջակցություն*
- *համոզվել, որ ներկայացված նոր նյութն օգնեց աշակերտներին առաջադրանքը կատարելիս*
- *համոզվել որ աշակերտները մասնակցում են, միմյանց լսում ու աջակցում են*
- *հավաստիանալ, որ կատարվող աշխատանքը կազմակերպված է*

❖ **ՈՒՀՁ (UDL) ուղենիշներ**

- Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար:

*-**Պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները,** շարահյուսությունն ու լեզվական կառույցները:*

- Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները,

Հրահանգներն են՝

❖ Ընտրել ժամապահ, ներկայացնողներ, թիմի պատասխանատու:

❖ Թիմում բոլորը պետք է ներկայացման իրենց հատվածն ունենան:

❖ Աշխատանքն իրականացնելու համար ունեք՝ 8 րոպե

❖ Յուրաքանչյուր թիմ աշխատանքը ներկայացնելու համար ունի՝ 2 րոպե:

- Առաջադրանքի վերաբերյալ տրվում են ընկալման ստուգման հարցեր՝

1. *Որո՞նք են առաջադրանքի պահանջները:*
2. *Որքա՞ն ժամանակ ունեք պատրաստվելու համար:*

Տրված ժամանակը և առաջադրանքի հարցերը պատկերվում են նաև սահիկաշարի վրա, վերջում կատարվում է հետհաշվարկ:

Խմբերի աշխատանքները ներկայացնելուց հետո անմիջապես ուսուցչի կողմից տրվում է հետադարձ կապ դասի ակտիվությանն ու ներկայացրած գիտելիքին՝ ստուգաթերթի միջոցով, որը երեք օրինակով տպված է եղել նախապես երկու խմբի և ուսուցչի համար: Խմբերը ներկայացնելու ընթացքում մեկը մյուսին լսելիս նշումներ են կատարում, ինչպես նաև ուսուցիչը:

դրանց միջև գոյություն ունեցող կապերը։ *-Տարբերակել ֆիզիկական միջավայրում ուղղորդվելու և պատասխանելու մեթոդները։* *-Աջակցել պլանավորման ու ռազմավարություններ ի զարգացման գործընթացին։* *Դյուրինացնել և օժանդակել տեղեկատվության և ռեսուրսների ղեկավարումը։* *Ուսումնառությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը։* *- Խրախուսել համագործակցությունն ու հաղորդակցությունը։* *-Տրամադրել դեպի կատարյալն ու ավելի լավն ուղղորդող հետադարձ կապ։*	

Ինքնուրույն աշխատանք (5 րոպե)

Գրել թե ինչ ինքնուրույն աշխատանք է պատրաստված աշակերտների համար։ Ինքնուրույն աշխատանքը պետք է արտացոլի դասի վերջնարդյունքները և կապված լինի դասի նախորդ փուլերի հետ։ Նշել առաջադրանքի հրահանգը, ուսուցչի և աշակերտների գործողությունները, աշակերտների վարքային ակնկալիքները։

❖ **Պլանավորման ուղղորդումներ** **Անհրաժեշտ է** ● *ապահովել առաջադրանք, որը խթանում է աշակերտների քննական մտածողությունը* ● *հնարավորություն տալ աշակերտներին ինքուրույն աշխատելու* ❖ **ՈՒՀՁ (UDL) ուղենիշներ** *-Ապահովել այլընտրանքներ լսողական և տեսողական տեղեկատվության համար:* *-**Պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները,** շարահյուսությունն ու լեզվական կառույցները:* *-Տրամադրել տեղեկությունը*	● Ուսուցիչը յուրաքանչյուր աշակերտի հանձնարարում է պատասխանել **հետևյալ հարցերին** *(առաջադրանքը կա թղթային տարբերակով):*

բազմազան միջոցներով։ *- Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը։* *-Ուղղորդել տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործունեությունը։* *- Խթանել մոտիվացիան՝ բարձր ակնկալիքների միջոցով։* *Զարգացնել դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու անձնային որակներն ու ռազմավարությունները։*	

Դասի ավարտ (3 րոպե)

Ամփոփել դասի վերջնարդյունքները և կարևոր դրույթները։ Աշակերտների հետ քննարկել սովորածի կարևորությունն ու հետագա կիրառությունը։ Բացատրել տնային հանձնարարությունը և հաջորդիվ քայլերը։

❖ **Պլանավորման**	• Ուսուցիչը աշակերտների հետ անդրադարձ է կատարում դասի նպատակներին հարցադրումներով, *աշակերտները պատասխանում են պատահականության սկզբունքով. ուսուցիչը արկղիկից անուններ է հանում։*

ուղղորդումներ Անհրաժեշտ է՝ ● *անդրադարձ կատարել աշակերտների վարքին եւ կատարողականին (գնահատում/ խրախուսանք)* ● *հետադարձ կապ տրամադրել դասին* ❖ ՈՒՀՁ (UDL) ուղենիշներ *-Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը:* *-Զարգացնել առաջընթացի մշտադիտարկման կարողությունը:*	*1. Որո՞նք էին դասի վերջնարդյունքները:* *2. Ի՞նչ քայլեր/գործողություններ արեցինք մեր վերջնարդյունքներին հասնելու համար:* *3. Դասի ո՞ր հատվածում ո՞ր վերջնարդյունքին հասանք:* *4. Ի՞նչ հմտություններ ձեռք բերեցինք և որ քայլերի շնորհիվ:* ● Ապա աշակերտներից յուրաքանչյուրին տրվում է ելքի քարտ, որի վրա գրված է հետևյալ հարցը՝ Նշի՛ր 1 փաստ, որ սովորեցիր այսօր *(քարտերը կպչուն թերթերից են, վերջիններս փակցնում են օրվա փաստեր պաստառին):*

-Ընդգծել և տեսանելի դարձնել վերջնարդյունքների կարևորությունը։ *-Զարգացնել ինքնագնահատման ու վերլուծական ինքնանդրադարձ կատարելու ունակությունները։*	

Եզրակացություններ

Արժեքները, արժեքային համակարգերը և կողմնորոշումները հանդես են գալիս որպես անձի, միջանձնային հարաբերությունների, սոցիալական ինստիտուտների ու հասարակության ձևավորման նշանակալի բաղադրիչ: Ժամանակակից արժեհամակարգերի փոխակերպումների ուսումնասիրությունները հնարավորություն ու հեռանկար են ընձեռում սոցիալականացման նպատակային ծրագրեր մշակելու համար:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձեւավորումը առարկայի դասավանդման

ընթացքում թեմայով հետազոտական աշխատանքը կատարելուց հետո եկանք

հետևյալ եզրահանգումներին.

- Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:
- Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:
- Դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման և արժեքային համակարգի ձևավորման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում թեմայով հետազոտական աշխատանքը ավարտելուց

հետո կարող ենք անել հետևյալ առաջարկությունները.

- Սովորողների արժեքային համակարգը բազմակողմանի զարգացնելու համար հարկ է նրանց ավելի շատ ներառել արտադասարանական միջոցառումների մեջ:
- Թատրոններ հաճախելը, էքսկուրսիաները, պատմամշակութային վայրեր այցելելը, հայտնի արվեստագետների, քանդակագործների և արհեստագործների արվեստանոցներ ու արհեստանոցներ այցերը ևս պետք է

- ներառված լինեն ուսումնական հաստատության գործունեության մեջ, ինչը կարծում ենք էլ ավելի պատկերավոր կդարձնի արժեքների ըմբռնումը:
- Դասաժամերին հավելյալ քննարկումները, պատմությունից օրինակները ևս լավ միջոց են արժեհամակարգ ձևավորելու:
- Կազմակերպել հանդիպումներ, ականավոր գործիչների հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սուխոմլինսկի Վ.Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977:
2. Փարեմուզյան Ի., Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, պրակ 1, Երևան, 2017:
3. Քոչարյան Ռ., Պատմությունը և Հերմենևտիկան, Գիրք 1. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, «Փրինթինֆո», Եր., 2016:
4. Инглхарт Ф. Р., Постмодерн: меняющиеся ценности и изменяющиеся общества,
5. https://sociology.mephi.ru/docs/polit/html/ingl.htm
6. Piyasa M., Human values: nature, meaning and types. https://www.yourarticlelibrary.com/essay/values/human-values-meaning-nature-and-types/86964
7. Shalom H. Schwartz. Basic Human Values: An Overview, p. 2, https://scholarworks.gvsu.edu/cgi/viewcontent.cgi?article=1116&context=orpc